թիւնը սոյն տարեայ մարտ 22-ից հրի ու սրի մատնեց Ղարաբաղի հայ աշխատաւոր գիւղացիութիւնը՝ այրելով գիւղեր ու քաղաքներ, ոչնչացնելով խաղաղ ազգաբնակութիւնը, չխնայելով կանանց ու երեխաներին: Այդ գործերը այժմ էլ Ղարաբաղում են և շարունակում են իրենց գործողութիւնները դէնքի ուժով յիշեալ շրջանի աշխատաւոր գիւղացիութիւնը Ադրբէջանին ենթարկելու համար:

Մեր կառավարութեան հասած մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, արդէն Հայաստանի սահմաններում գտնուող ազրբէջանեան զօրքի կազմը լրացնելու համար շարժւում են նոր պահեստի մասեր՝ զօրքի անուան տակ: Հայաստանի կառավարութիւնը հաստատած լինելով, որ Ադրբէջանի բանւորա-գիւղացիական կառավարութիւնը, որ յայտարարել է ժողովուրդների ազատ կամարտայայտութեան սկզբունքը, չի կարող ընթանալ մուսաւաթական կառավարութեան ուղիով, մի կառավարութեան, որ ձեր ժողովրդի և ձեր կողմից ճանաչուած է Ադրբէջանեան հանրապետութեան աշխատաւոր ժողովրդի շահերի դաւաճան և չի յապաղի շտապ միջոցներ ձեռք առնելու Ղարաբաղում և Զանգեզուրում տեղի ունեցող կռիւների դադարեցման և յիշեալ շրջաններից ազրբէջանեան զօրքը յետ կանչելու համար:

№ 2686· Արտաքին գործերի նախարար Հ· Օհանջանեան»:

Նօտաների հետևանքի մասին դեռ տեղեկութիւն չառած, մայիս 1-ին, առաւօտեան ժամը 7 և կէսին Ադրբէջանի նոր կառավարութեան կողմից ստացանք հետևեալ վերջնագիրը·

Հայաստանի կառավարութեան, Բագու, ապրիլ 30·

Ադրբէջանի Խորհրդային Հանրապետութեան բանւորա-գիւղացիական կառավարութիւնը, յանձին յեղափոխական կոմիտէի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր զօրքերից Ղարաբաղի և Զանգեզուրի հողը, երկրորդ՝ քաշել դէպի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջեան կոտորածը: Հակառակ դէպքում, Ադրբէջանեան Ընկերվարական Խորհրդային Հանրապետութեան յեղափոխական կոմիտէն իրեն կը համարի պատերազմական դրութեան մէջ Հայաստանի Հանրապետութեան հետ: Վերջնագրի պատասխանի համար տրւում է երեք օր ժամանակ: Ադրբէջանի Խորհրդ· Հանր· արտաքին գործերի կոմիսար Հուսէյինով»:

Մի քանի ժամ յետոյ ստացւեց մի այլ վերջնագիր, Կովկասեան ճակատի խորհրդային ռազմա-յեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձէի և այլոց ստորագրութեամբ·

Հայկական կառավարութեան: Պատնէշ Ադրբէջանի Խորհրդային Հանրապետութեան Յեղափոխական Կոմիտէին: Մոսկւա՝ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ Լենինին, արտաքին գործոց կոմիսար Չիչերինին, Կովկասեան ճակատի հրամանատար Սմիլգային·

Հայաստանի և մեզ բարեկամ ու դաշնակից Խորհրդային Ադրբէջանի սահմաններում շարունակւում են զինւորական գործողութիւնները Ադրբէջանի և Հայաստանի միջև: Ռուսական բանւորա-գիւղացիական կառավարութիւնն իր սրբազան պարտքն է համարում բոլոր ուժերով օգնութեան գալ Ադրբէջանի Համայն աշխատաւորութեան անունից իրեն ձեռք մեկնողներին, որոնք կամենում են վերջնականապէս ամրապնդել բանւորա-գիւղացիական իշխանութիւնն Ադրբէջանում:

Ազգային հողի վրա տեղի ունեցող թշնամանքը և անգլիացիների ու դաշնակիցների և Դաշնակցութիւն ու Մուսաւաթ կուսակցութիւնների ագիտացիայով բորբոքւող զինւորական գործողութիւնները հայ-ադրբէջանեան